

## «Հողագույքային հարաբերություններ» մագիստրոսական ծրագիր

### **Ընդհանուր տեղեկություն**

«Հողագույքային հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագիրը նպատակաուղղված է հողագույքային հարաբերությունների, անշարժ գույքի կառավարման ոլորտում գործնական կարողությունների ձևավորմանը: Ծրագրի նպատակներ են.

- բարձրագույն կրթության մագիստրոսական համակարգում հողագույքային հարաբերությունների, անշարժ գույքի կառավարման ոլորտում որակյալ մասնագետների պատրաստում,
- համապատասխանեցնել ծավալված կրթական գործընթացի և մասնագետների պատրաստման որակական ցուցանիշները եվրոպական ստանդարտներին և համընդհանուր կրթական չափանիշներին,
- նպաստել ինտեգրմանը եվրոպական կրթական համակարգին «Հողագույքային հարաբերություններ» մասնագիտացման ոլորտում նոր սերնդի մասնագետների պատրաստման գործընթացին:

Շրջանավարտին շնորհվում է «Տնտեսագիտության մագիստրոս» որակավորում: Ծրագիրը մշակվել է հողագույքային հարաբերությունների, անշարժ գույքի կառավարման ոլորտի մասնագետների ակտիվ մասնակցությամբ և միտված է ոլորտի լավագույն փորձի ներդաշնակեցմանը:

Ծրագրի տևողությունը 2 տարի է, դասապրոցեսը նախատեսվում է իրականացնել շաբաթական երեք անգամ:

Մասնագիտական դասընթացներին զուգահեռ մագիստրոսը համապատասխան փորձառություն պետք է անցնի ոլորտի կառավարման օղակներում և ձեռնարկություններում, որի ընթացքում հնարավորություն կստանա գործնականում կիրառել ստացված տեսական գիտելիքները և հմտությունները:

Ծրագրի շրջանակներում որպես դասախոսներ ներգրավվում են հողագույքային հարաբերությունների, անշարժ գույքի կառավարման պետական, համայնքային և մասնավոր ոլորտների (ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի, ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, ինչպես նաև որակավորված և լիցենզավորված մասնավոր հատվածի) լավագույն մասնագետները և փորձագետները: Ակնկալվում է նաև միջազգային հայտնի

կազմակերպություններից հրավիրյալ դասախոսների ներգրավում, ինչպես նաև՝ ուսանողների մասնակցություն ուղրտի բազմաբնույթ միջոցառումներին, այդ թվում տեղական և միջազգային հողագույքային հարաբերություններին վերաբերող սեմինարներին և կոնֆերանսներին: Ուսումնառության ժամանակ ուսանողները հնարավորություն կունենան օգտվել ՀՊՏՀ-ում առկա գրադարանից և ենթակառուցվածքներից, նաև հողագույքային հարաբերությունների, անշարժ գույքի կառավարման գործադիր և մասնավոր հատվածի ռեսուրսներից, տեղեկատվական շտեմարաններից և վերլուծական աղբյուրներից:

Ուսման վճարը մեկ տարվա համար 520 000 ՀՀ դրամ է: Ծրագրի տևողությունն 2 տարի է, ամբողջ ծրագրի տևողության արժեքը կազմում է 1 040 000 ՀՀ դրամ:

### ***Մասնագիտության նկարագիր***

«Հողագույքային հարաբերություններ»-ը 2 տարի տևողությամբ մագիստրոսական կրթական ծրագիր է, որը կողմնորոշված է պատրաստել համապատասխան գիտելիքներով, կարողություններով և հմտություններով օժտված մասնագետների, որոնք

- կարող են լուծել հողային հարաբերությունների, հողային պետական քաղաքականության վարման և հսկողա-վերահսկողական հիմնական տարրերի, դրանց մեթոդաբանության մշակման և կիրառման ուղղությունների, հողագույքային համապետական համակարգերի ներդրման շարժառիթների խնդիրները,
- կկարողանան իրականացնել սեփականության ինստիտուցիոնալ հիմնահարցերի, գույքաշրջանառելիության ասպեկտների ու հողային օրենսդրության պահանջների կատարման, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործնական աշխատանքները
- կկարողանան կիրառել հողերի, շենք-շինությունների հաշվառման և գնահատման հիմնական գործառույթները,
- կկարողանան իրականացնել հողագույքային հարաբերությունների վերահսկողության և կառավարման ուղրտում սահմանված գործարքների, պայմանագրերի կազմման և կիրառման, որակավորման և լիցենզավորված գործունեության իրականացման, հողաշինարարության և անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության և բնության մեջ փաստացի իրողության համադրումներ, ինչպես նաև՝ անշարժ գույքի գնահատման և օտարման գործառույթներ,
- կկարողանան մշակել և իրականացնել անշարժ գույքի հաշվառման, գնահատման և պետական գրանցման հետ առընչվող անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, կուտակման, խմբավորման, մշակման, վերամշակման և տրամադրման ընթացակարգերում սահմանված իրավական ակտերի, համապետական կանոնակարգերի սահմանված գործիքակազմերի,

վերահսկողության ձևերի և մեխանիզմների շրջանակներում պահանջվող աշխատանքները,

- կհիմնավորեն հողագույքային հարաբերությունների վերահսկողության վարչարարության հիմնական սկզբունքները, կառավարման և հսկողության մեխանիզմները, կարողանան կատարել հողագույքային հարաբերություններում պետական կառավարման մարմինների գործառույթների բացահայտման, բնորոշման և իրականացման տեսական և պրակտիկ աշխատանքները,
- կկարողանան մշակել հողագույքային հարաբերությունների հսկողավերահսկողական մեխանիզմների անհրաժեշտության, առանձնահատկությունների և օրենսդրության հիմքերի, նպատակների ու սկզբունքների, գործիքակազմում մեթոդոլոգիական կանոնակարգերի կիրառելիությունը,
- կիրականացնեն համաշխարհային փորձի և միջազգային մոդելների, հողագույքային հարաբերություններում բացահայտված կառավարման և վերահսկողության կատարելագործման հիմնական դրույթները ՀՀ-ում,
- կիրականացնեն հողագույքային հարաբերությունների ձևավորման իրավական սահմանումների, այդ հարաբերությունների արդյունքում կազմակերպվող գործընթացների օրենսդրական գործառույթների, դրանցից բխող վերահսկողական մեխանիզմները պրակտիկ ներդրման հիմնահարցերը,
- կիրականացնեն հողերի սխեմաների, գլխավոր հատակագծերի, հողային հաշվեկշիռների և հողերի արդյունավետ օգտագործման առանձնահատկությունները,
- կբնորոշեն երկրատեղեկատվական համակարգերի ներդրման և ստացվող ավտոմատ համակարգերի արդյունավետությունը,
- կնպաստեն հասարակության գիտակցության բարձրացմանը, տեղեկացվածության և կրթության տարածմանը:

Դասընթացները ներառում են հողագույքային հարաբերությունների, անշարժ գույքի կառավարման հետևյալ հիմնական ուղղությունները՝ հողերի և անշարժ գույքի հաշվառում և գնահատում, չափագրում, կադաստրային քարտեզագրում, անշարժ գույքի ծածկագրում, իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում, տեղեկատվության տրամադրում, հողագույքային հարաբերությունների վերահսկողության մեխանիզմներ, անշարժ գույքի գնահատում և հարկում, հողերի և անշարժ գույքի ռիսկերի գնահատում, երկրատեղեկատվական համակարգեր և այլն:

**Աշխատանքի հնարավորություններ**

Մագիստրոսները կարող են զբաղեցնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավար, գլխավոր և առաջատար մասնագետների պաշտոններ, մասնավոր մասնագիտացված կառույցների ղեկավարներ և

որակավորված մասնագետներ, անշարժ գույքի հաշվառողներ, գնահատողներ, դատական և նեղ մասնագիտացած փորձագետներ, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական ռեգիստրներ, հողաշինարարներ, տեղեկատվական համակարգերի, համակարգված դիտարկումների օպերատորներ, անշարժ գույքի շրջանառելիության սպասարկման գրասենյակների ոլորտի աշխատողներ: